

Կ-037-17.08.2012-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

««ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ» ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 1-ին հոդվածում «Սահմանադրությամբ ամրագրված» բառերից հետո լրացնել «բոլորի համար հավասար» բառերը:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածից հանել «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» բառերը:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի՝

1. 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ, առաջին մասը լրացնել ***նոր*** 10.1-րդ, 10.2-րդ, 10.3-րդ, 10.4-րդ, 10.5-րդ, 10.6-րդ, 10.7-րդ, ***10.8-րդ և 10.9-րդ*** կետերով.

«10) *հատուկ հանրակրթական դպրոց*՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորող սովորողների համար հանրակրթական հիմնական ընդհանուր եւ (կամ) հանրակրթական հիմնական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ.,

10.1) *կրթության առանձնահատուկ պայմաններ*՝ անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի եւ ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական եւ այլ ծառայությունների ամբողջություն.

10.2) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝ ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, ում կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմաններ.

10.3) *ներառական կրթություն՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորշչով սահմանված արդյունքի ապահովում.*

10.4) *մանկավարժահոգեբանական* աջակցության *ծառայություններ՝ ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին.*

10.5) երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում.

10.6) *մանկավարժահոգեբանական աջակցության* կենտրոն՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն *աջակցող մանկավարժահոգեբանական* և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն.

10.7) ֆինանսավորման բարձրացված չափաքանակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար.

10.8) անհատական ուսուցման պլան՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ աջակցող ծառայությունները).

10.9) ուսուցչի օգնական՝ կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող.»:

2. 12-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«12) մանկավարժական աշխատող՝ սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության պահանջները ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակից»:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է, որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:»:

Հոդված 5. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը,

2) մարդկային արժանապատվության պահպանմանը,

3) իր ընդունակություններին, կարողություններին եւ առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը,

4) ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը,

5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեությանը նախապատրաստմանը,

6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը,

7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը»:

Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1) ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները»,

2. 2-րդ կետից հանել «և ուսումնական բնագավառների» բառերը:

Հոդված 7. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ և լրացնել նոր 1.1-րդ կետ.

«3. Հանրակրթական հիմնական ծրագրերն են.

1.1) նախադպրոցական. »,

2) լրացնել նոր պարբերություն.

«Նախադպրոցական ծրագրերն իրականացվում են ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան»:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածի

1. 1) 1-ին կետ շարադրել նոր խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընտրում է տնօրեն»:

2) 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«6) տնօրենի ներկայացմամբ քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, տալիս է հավանություն և ներկայացնում պետական լիազորված մարմնի հաստատմանը: »:

2. 3-րդ մասում՝

1) «դադարեցվում են» բառերից հետո լրացնել «լիազորված մարմնի կողմից» բառերով,

2) լրացնել նոր 6.1-րդ կետ.

«6.1) խորհրդի կազմում սահմանված կարգի **խախտմամբ ընդգրկված** լինելու դեպքում:»,

3. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Խորհրդի անդամի լիազորությունները սույն հոդվածի 3-րդ մասի 1-ից 4-րդ կետերով սահմանված հիմքերով չեն կարող դադարեցվել՝ **տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի օրվանից մինչև տվյալ մրցույթի ավարտը, բացառությամբ ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամի դպրոցում սովորող երեխա չունենալու, ինչպես նաև մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված ուսուցչի աշխատանքից ազատվելու դեպքերի**»:

Հոդված 9. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Պետական ուսումնական հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն) ընտրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մրցութային կարգով:

Տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցութին կարող է մասնակցել, իսկ ոչ պետական ուսումնական հաստատության և հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարի թափուր պաշտոնում կարող է նշանակվել կամ ընտրվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստացած անձը: **Բացառություն կարող են կազմել սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա», «բ», «գ» և «դ» ենթակետերով սահմանված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների ղեկավարները:**

2. 4-րդ մասը «**ընթացակարգերը**» բառից հետո լրացնել. «, ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) դադարեցման դեպքերն ու **ընթացակարգը,**» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

3. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. **Վերապատրաստումը կազմակերպվում է տարեկան առնվազն մեկ անգամ:**

4. 14-րդ մասից հանել «խորհրդի հետ» բառերը և «կարգով» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառը:

5. 16-րդ մասում «տնօրենը» բառից հետո լրացնել «(հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը)» բառերը

6. 17-րդ մասը և 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«17. Ուսումնական հաստատության տնօրեն (հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավար) չի կարող առաջադրվել, ընտրվել (նշանակվել) այն անձը, ով՝

1) սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով սահմանված կարգով չի ստացել ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.»:

Հոդված 10. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ .

«Ուսումնական հաստատությունն այդ մասին որոշումը կայացնում է մինչև սեպտեմբերի 1-ը և առնվազն տասնօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է կրթության պետական կառավարման և տարածքային /Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին/ կառավարման լիազորված մարմիններին:»:

Հոդված 11. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասում «է՝ համաձայն ոլորտը կարգավորող օրենսդրության» բառերը փոխարինել «ընդհանուր հիմնունքերով» բառերով,

2. 10-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Տվյալ ուսումնական տարվա հանրակրթական հիմնական ծրագիրը չյուրացրած սովորողի հաջորդ դասարան փոխադրվելու, ինչպես նաև տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:»

3. 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Ուսումնական պարապմունքներից բացակայություններ ունեցող սովորողների հետագա ուսումնառության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:»:

Հոդված 12. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«5. Առողջական վիճակի պատճառով ուսումնական հաստատություններ հաճախել չկարողացող *սովորողների* համար կազմակերպվում է տնային ուսուցում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

2. Լրացնել նոր 5.1.-րդ մաս.

«5.1. Երեխայի կրթության իրավունքն ապահովելու նպատակով *հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում* հանրակրթական ծրագրերին համապատասխան կազմակերպվում է երկարատև (ոչ պակաս, քան 21 օր) բուժման մեջ գտնվող երեխաների ուսուցումը:

Այն իրականացվում է տվյալ բժշկական կազմակերպությունում և ուսումնական հաստատության միջև պայմանագրի հիման վրա, որի օրինակելի ձևը հաստատվում է կրթության պետական կառավարման և առողջապահության պետական կառավարման

լիազորված մարմինների ղեկավարների համատեղ հրամանով: Պայմանագրի պատճենը ներկայացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմին:»:

3. 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Ուսումնական հաստատությունը կրթական ծառայությունների մատչելիությունը, որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կրթական գործընթացի մասնակիցներին (սովորող, ծնող, մանկավարժական աշխատողներ և այլն) տրամադրում է(են) կրթության կազմակերպման *մանկավարժահոգեբանական աջակցության* ծառայություններ: Կրթության կազմակերպման *մանկավարժահոգեբանական աջակցության* ծառայությունների տրամադրման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:»:

Հոդված 13. Օրենքը լրացնել նոր՝ 17.1-րդ, 17.2-րդ և 17.3-րդ հոդվածներով.

«**Հոդված 17.1.** Կրթության կազմակերպման *մանկավարժահոգեբանական աջակցության* ծառայությունները

1. Երեխայի կրթության կազմակերպման *մանկավարժահոգեբանական աջակցության* ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակում.

1) դպրոցական մակարդակ՝ *մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության* կողմից,

2) տարածքային մակարդակ՝ տարածքային *մանկավարժահոգեբանական աջակցության* կենտրոնի կողմից,

3) հանրապետական մակարդակ՝ հանրապետական *մանկավարժահոգեբանական*-կան կենտրոնի կողմից:

2. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը՝ վկայագրման նպատակով, իրականացվում է տարածքային *մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների* կողմից:

3. *Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներով:*

4. Տարածքային *մանկավարժահոգեբանական աջակցության* կենտրոնի՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում, ծնողը կարող է արդյունքները բողոքարկել հանրապետական *մանկավարժահոգեբանական* կենտրոն:

5. *Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության* կենտրոնները՝

1) իրականացնում են երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում,

2) կազմում են համապատասխան եզրակացություն՝ երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ,

3) մատուցում են կրթության կազմակերպման աջակցության ծառայություններ,

4) իրականացնում են խորհրդատվական փոխայցեր ուսումնական հաստատություններ,

5) կազմակերպում և անցկացնում են վերապատրաստումներ,

6) իրականացնում են օրենսդրությամբ և իրենց կանոնադրությամբ սահմանված այլ գործառնություններ:

6. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը՝

1) սահմանում է մանկավարժահոգեբանական աջակցության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման միասնական մոտեցումը,

2) մշակում է մանկավարժահոգեբանական ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերը,

3) համակարգում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքները,

4) մշակում է գիտամեթոդական և ուսումնամեթոդական նյութեր և ուղեցույցներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժահոգեբանական մասնագետների համար,

5) կազմակերպում և իրականացնում է վերապատրաստումներ, տրամադրում մասնագիտական խորհրդատվություն,

6) ստեղծում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների բազա, իրականացնում տվյալների վերլուծություն և տալիս առաջարկություններ՝ քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ,

7) իրականացնում է օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ ու գործառնություններ:

7. Տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները և տարածքային ու հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9. Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնները ունեն պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

10. Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների տնօրենները նշանակվում են կրթության պետական կառավարման լրագործած մարմնի կողմից:

11. Երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության եռամսյակային ծառայություններ տրամադրող մանկավարժական աշխատողների մեկ հինգերորդը տարեկան անցնում է համապատասխան վերապատրաստում՝ ըստ ուսումնական հաստատության և համապատասխան մանկավարժահոգեբանական կենտրոնի ղեկավարի կազմած ժամանակացույցի:

Երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության եռամսյակային ծառայությունները տրամադրող մանկավարժական աշխատողների վերապատրաստումը կազմակերպվում է սույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ուսուցչի վերապատրաստման ընթացակարգերով:

Հոդված 17.2. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը

1. Կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով երեխան կարող է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա *կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի կողմից ստորագրված համաձայնագիրը:*

2. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատումը կազմակերպվում է ծնողի (կամ նրա այլ օրինական ներկայացուցչի) մասնակցությամբ:

3. *Երեխային կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի գնահատումը իրականացվում է երեխային կենսագործունեության բնական միջավայրում (ընտանիք, ուսումնական հաստատություն և երեխայի շփման այլ միջավայրում):*

Հոդված 17.3. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը

1. *Տարածքային մանկավարժահոգեբանական* կենտրոնի կողմից տրված երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

2. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի տիպային ձեւը մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագիր ունեցող երեխայի կրթության կազմակերպման համար տրամադրվում են համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, իսկ սույն օրենքի 35-րդ հոդվածի 3.1-րդ կետով սահմանված դեպքում տրվում է ֆինանսավորման բարձրացված չափաքանակ՝ համաձայն նույն հոդվածի 3.2-րդ կետի պայմանների»:

Հոդված 14. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 3.1-րդ կետով.

«3.1) ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն»:

Հոդված 15. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը «թեկնածուի առկայության» բառերից հետո լրացնել *«կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղելու դեպքում, եթե մինչ այդ առնվազն 2 անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չի համալրվել:», իսկ «դեպքերում» բառը հանել:*

Հոդված 16. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը 2-րդ կետից հետո լրացնել նոր՝ 2.1-րդ և 2.2-րդ կետերով՝

«2.1) մասնակցելու երեխայի անհատական ուսուցման **պլանի** մշակմանն ու իրականացմանը.

2.2) ստանալու անհրաժեշտ խորհրդատվություն երեխայի կրթության կազմակերպման աջակցության ծառայությունների վերաբերյալ:»:

Հոդված 17. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի՝

1) 1-ին կետում «պետական ծրագրերը» բառերից հետո լրացնել «հաստատում է» բառերը,

2) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) համարվում է պետական ավագ դպրոցների, ինչպես նաև տարածքային ու հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների պետական լիազոր մարմինը:»:

3) 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2. լրացնել նոր՝ 26.1-րդ կետ.

«26.1) տրամադրում է լուծարված ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի կրկնօրինակը՝ **արխիվային** հիմքերի առկայության դեպքում:»:

Հոդված 18. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատությունների ընտրված տնօրենի հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցնում է տնօրենի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը.»

2) լրացնել նոր՝ 6.1-րդ կետ .

«6.1) աջակցում է ուսուցչի ատեստավորման գործընթացին:»

Հոդված 19. Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել նոր 3.1-րդ և 3.2-րդ մասերով.

«3.1. Կրթության *կազմակերպման համար* լրացուցիչ պետական աջակցությունից՝ *ֆինանսավորման բարձրացված չափաքանակով, օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները, ովքեր ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խորը խանգարումները.*

1) ծայնի և խոսքի,

2) լսողական,

3) տեսողական,

4) *ինտելեկտուալ* (մտավոր) հետամնացություն ունեցող,

5) շարժողական:

3.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ *ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի*, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»

Հոդված 20. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» 2005 թվականի մայիսի 25-ի ՀՕ-136-Ն օրենքը:

Հոդված 21. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը՝

1) Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, Երևան քաղաքում *առնվազն չորս*, վերակազմակերպվում է տարածքային *մանկավարժահոգեբանական* աջակցության կենտրոնի:

Եթե տվյալ մարզում առկա չէ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, ապա *մանկավարժահոգեբանական* աջակցության կենտրոնի կարող է վերակազմակերպվել կամ պատվիրակվել այնպիսի կազմակերպության, որում առկա են ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ:

Մինչև տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների ամբողջական ներդրումը Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը շարունակում է կատարել սույն օրենքի 17.1-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով սահմանված լիազորությունները այն մարզերում, որտեղ դեռևս չեն ստեղծվել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ: Դրանց ստեղծմանը հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում հանրապետական կենտրոնը տվյալ տարածքի (մարզի) շահառուների և նախընթաց գործընթացների վերաբերյալ տվյալները և փաստաթղթային հիմքերը փոխանցում է տվյալ տարածքային կենտրոնին՝ համաձայն քաղաքացիաիրավական օրենսդրության:

2) Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությամբ:

3) Մինչև Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված օրենքի 17.1-րդ հոդվածի միջոցառումների ներդրման ավարտը չներդրված մարզերի և հանրակրթական դպրոցների համար կիրառվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործող կարգը:

4) Մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը ներդրվում է համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված գործողությունների պլանի և ժամանակացույցի:

2. Ոչ պետական ուսումնական հաստատության և հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարները վերապատրաստվում և հավաստագրվում են մինչև 2016 թվականի հունվարի մեկը: Հավաստագիր չստացած ոչ պետական ուսումնական հաստատության և հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարների հետ կնքված աշխատանքային պայմանագրերը լուծվում են:

Հոդված 22. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ» և «Կրթության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» ՀՀ օրենքների առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
Ռ.Մուրադյան, Ա.Դավթյան, կառավարություն	Հոդված 3, մաս 1,	ա) Լրացնել. «10.8-րդ և 10.9-րդ» բառերը, ինչպես նաև սահմանել «անհատական ուսուցման պլան» և «ուսուցչի օգնական» հասկացությունները: բ) ամբողջ նախագծում «հոգեբանական կենտրոն» բառերը փոխարինել մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն բառերով գ) 10.1-րդ կետում «կրթական ծրագիր» բառերը փոխարինել «առարկայական ծրագրեր» բառերով դ) 10.3-րդ կետում համար բառից հետո լրացնել « այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, » ե) 10.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին. զ) 10.5-րդ կետից հանել նպատակը նկարագրող առաջին առաջին նախադասությունը, է) 10.6 –րդ կետից հանել «հատուկ կրթական ծրագրեր իրականացնող» բառերը: ը) 12-րդ կետում լրացնել «ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի աշխատակից» բառերը,	Ընդունվել է
Ա.Դավթյան	Հոդված 4,	Լրացնել համընդհանուր ներառման քաղաքականության սահմանման վերաբերյալ դրույթ	Ընդունվել է, սահմանվել է օրենքի 4-րդ

			հողվածում
Հ.Բաբուխանյան		Լրացնել 7-րդ ենթակետի տեղեկյալ բովանդակությամբ. «7) ապագա քաղաքացու ձևավորմանը»	Ընդունվել է
Ռ.Մուրադյան	Հոդված 5, 1-ին մաս	հանել «նվազագույն» բառը	Ընդունվել է
	Հոդված 6, 1-ին և 2-րդ մասեր	խմբագրել , պահպանելով իմաստը	Ընդունվել է
	Հոդված 8, մաս 1-ին, 3-րդ	Լրացնել 1-ին մաս, հետևյալ բովանդակությամբ. 1) 1.1) 1-ին կետ շարադրել նոր խմբագրությամբ. «1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընտրում է տնօրեն:», 3) 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «6) տնօրենի ներկայացմամբ քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, տալիս է հավանություն և ներկայացնում 4) 3-րդ մասում, նախադասության 2-րդ հատվածը շարադրել՝ «տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի օրվանից մինչև տվյալ մրցույթի ավարտը, բացառությամբ ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամի դպրոցում սովորող երեխա չունենալու, ինչպես նաև մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված ուսուցչի աշխատանքից ազատվելու դեպքերի»:պետական լիազորված մարմնի հաստատմանը:»:	Ընդունվել է
Ա.Դավթյան		Ոչ պետական ուսումնական հաստատությունների տնօրենի թեկնածուի հավաստագրման պայմանի համար բացառություն սահմանել միջազգային, հեղինակային, փորձարարական և այլընտրանքային ոչ պետական ՈՒՀ-ների համար: 4-րդ մասը «ընթացակարգերը» բառից հետո լրացնել. «, ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) դադարեցման դեպքերն ու ընթացակարգը,» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:	
Ռ.Մուրադյան	Հոդված 9, մաս 1-ին Հոդված 9, նոր	5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5. Վերապատրաստումը կազմակերպվում է տարեկան առնվազն մեկ անգամ: Վերանայել դպրոցների 5-օրյա և 6-օրյա ուսումնառության մասին իրազեկման ընթացակարգը:	Ընդունվել է

	Հոդված 11, մաս 1-ին	Խմբագրել հետևյալ կերպ. «4-րդ մասում «է՝ համաձայն ոլորտը կարգավորող օրենսդրության» բառերը փոխարինել «ընդհանուր հիմնունքերով» բառերով,	Ընդունվել է
Ա. Դավթյան	Հոդված 12, մաս 1-ին Հոդված 12, մաս 2-րդ Հոդված 12, մաս 2-րդ, 2-րդ պարբերություն	«Ժամանակավորապես կամ մշտապես» բառերը հանել, իսկ «անձ» բառը փոխարինել «սովորող» բառով: «Բուժական հաստատություն» բառերը փոխարինել «հիվանդանոցային բժշկական կազմակերպություն» բառերով Լրացնել «որի օրինակելի ձևը հաստատվում է կրթության պետական կառավարման և առողջապահության պետական կառավարման լիազորված մարմինների ղեկավարների համատեղ հրամանով:»	Ընդունվել է
Ա. Դավթյան	Հոդված 13՝ ըստ հոդված 17.1-ի	ա) Խմբագրել և դասակարգված ու ամբողջացված տեսքով սահմանել եռամսկարգակ աջակցության ծառայությունների լիազորությունները: բ) Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն իրականացնող մասնագետներին համարել մակավարժական աշխատող և նախատեսել վերապատրաստման պայմանը գ) Սահմանել երեխային գնահատման գործիքները և չափանիշները դ) հանել 7-րդ մասը ե) սահմանել մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կազմակերպա-իրավական ձևը, կառավարման համակարգը և աշխատակիցների կարգավիճակը	Ընդունվել է, Սահմանումները և լիազորությունները կատարվել են Տես հոդվածի 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ 9-րդ, 10-րդ և 11-րդ մասերը:
Ա. Դավթյան	Հոդված 13՝ ըստ հոդված 17.2-ի 1-ին մասի	1-ին մասում՝ «դիմումի հիան վրա» բառերից հետո լրացնել «կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի կողմից ստորագրված համաձայնագիրը: »	Ընդունվել է
Ա. Դավթյան կառավարություն	Հոդված 13՝ ըստ հոդված 17.2-ի 3-րդ մասի	Լրացնել . «3. Երեխային կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի գնահատումը իրականացվում է երեխային կենսագործունեության բնական միջավայրում (ընտանիք, ուսումնական հաստատություն և երեխայի շփման այլ միջավայրում):»	Ընդունվել է
Ա. Դավթյան Կառավարություն	Հոդված 13՝ ըստ հոդված 17.3-ի 3-րդ մասի	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագիր ունեցող երեխայի կրթության կազմակերպման համար տրամադրվում են համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցության	

